ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1

Նշվածներից ո՞րն է <<Դեկորատիվ նկարչություն>> տեսակի պարապմունքի առաջադրանք:

1. բնապատկերը
2. երկրաչափական քանդակը
3. նատյուրմորտը
4. էջանիշի ձևավորումը

2

Ո՞րը դեկորատիվ, կիրառական արվեստի տեսակ *չէ:*

1. ապակենկարչությունը (վիտրաժ)
2. որմնագորգը (գոբելեն)
3. էստամպը
4. կարպետագործությունը

3

Ո՞րն է դեկորատիվ հորինվածքի կառուցման առաջնային պահանջը:

1. մասնիկների բազմազանությունը
2. կոմպոզիցիայի արտահայտչականությունը
3. գունային համադրությունը /կոնտրաստ/
4. համաչափությունների պահպանումը

4

Ո՞րը <<Բնօրինակից նկարչություն>> տեսակի պարապմունքի փուլ *չէ:*

1. հեռանկարի, լույսի և ստվերի կիրառումը
2. զարդանախշի կազմումը
3. տեղադրումը թղթի մեջ
4. ստվերագծման կուլտուրան

5

Նշվածներից ո՞րը կերպարվեստի տեսակ *չէ:*

1. քանդակագործությունը
2. գեղանկարչությունը
3. թատրոնը
4. գրաֆիկան

6

Կերպարվեստի ո՞ր ժանրին է պատկանում թռչունների և կենդանիների պատկերումը:

1. անիմալիստական ժանրին
2. նատյուրմորտին
3. բնապատկերին
4. կենցաղային ժանրին

7 **Ո՞ւմ կողմից է առաջին անգամ կիրառվել ակադեմիական նկարչության դասավանդման համակարգը:**

1. Պոլիկլետի
2. Ալբերտիի
3. Միռոնի
4. Դյուրերի

8 **Ի՞նչ է կոչվում հատուկ ապակու (սմալտա) գունավոր փոքր քառակուսիներից և այլն կազմված նկարը:**

1. գրավյուրա
2. վերատպություն
3. խճանկար
4. ապլիկացիա

9 **Տրվածներից ո՞րը չի ստեղծվում կիրառական և գեղագիտական միասնությամբ:**

1. կավե աղամանը
2. արծաթյա գոտին
3. գոբելենը
4. բարձրաքանդակը

10 **Ո՞վ է ուսուցման դիդակտիկայի սկզբունքների հեղինակը:**

1. Ժան Ժակ Ռուսսոն
2. Պեստալոցցին
3. Կոմենսկին
4. Բրյուլովը

11 **Նշվածներից ո՞րը գույնի հատկություն *չէ:***

1. հագեցվածությունը
2. բազմազանությունը
3. լուսեղությունը
4. տոնը

12 **Աշակերտի ընգրկվելը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ նրա ո՞ր ունակությունն է զարգացնում:**

1. առաջխաղացման ձգտումների
2. տարածական պատկերացումների
3. սատարման և կարեկցանքի
4. գեղեցիկը զգալու և պատկերելու

13 **Նշվածներից ո՞րն է կերպարվեստի դասավանդման առաջնային խնդիր:**

1. ինքնահաստատման կարողության ձևավորումը
2. իրապաշտական վերարտադրության ձևավորումը
3. շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման զարգացումը
4. քննադատական մտածողության զարգացումը

14 **Մատիտով, փայտածուխով, տուշով կամ նույն գույնի ներկով արված նկարը կոչվում է՝**

1. զարդարվեստ
2. կոլլաժ
3. գեղանկարչություն
4. գրաֆիկա

15 **Ի՞նչ է կոչվում այն սպիտակ թուղթը, կամ տախտակը, որը նախատեսված է ներկերը խառնելու և ցանկալի գույն ստանալու համար:**

1. ներկապնակ
2. շրջանակ
3. մոլբերտ
4. պաստել

16 **Որևէ բանի վրա տարբեր զարդապատկերներից (ֆիգուրներից), կտրտված որևէ նյութից և այլն ստեղծված գեղարվեստական պատկերը կոչվում է՝**

1. Լիտոգրաֆիա
2. Մանրանկարչություն
3. Օֆորտ
4. Փակցանկարչություն (ապլիկացիա)

17 **Արևմտյան լուսավորիչներից ո՞րը ներդրում ունի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայում:**

1. Յոհանես Բեխեռը
2. Լիոն Ֆեյխտվանգերը
3. Ժան Ժակ Ռուսսոն
4. Թեդդը

18 **Վերածննդի դարաշրջանում նկարչության դասավանդման մեջ ի՞նչն էր համարվում առաջնայինը:**

1. արվեստի պատմությունը
2. գծանկարը
3. գունատեսությունը
4. ծեփակերտումը

19 **Դեկորատիվ արվեստի ո՞ր տեսակի համար է հատկապես անհրաժեշտ ներկարարության արհեստը:**

1. մետաղի մշակման
2. փայտի գեղարվեստական փորագրության
3. գորգագործության
4. բրուտագործության

20 **Ո՞վ է ժամանակակից գոբելենի արվեստի հիմնադիրը Հայաստանում:**

1. Կարապետ Եղիազարյանը
2. Հռիփսիմե Սիմոնյանը
3. Սարգիս Մուրադյանը
4. Արմինե Կալենցը

21 **Նշվածներից ո՞րն է դեկորատիվ, կիրառական արվեստի սինթետիկ բնույթի արտահայտությունը:**

1. կերպարվեստի տարբեր միջոցների համադրումը
2. պատկերագրությունը
3. ձևի և դեկորի փոխներթափանցումը
4. ուղղությունների ազդեցությունը

22 **Ո՞րն է նկարչի ստեղծագործական երևակայության ամենահզոր սկզբնաղբյուրը:**

1. թատրոնը
2. բնությունը
3. գույները
4. գրականությունը

23 **Որո՞նք են հայկական քաղաքային տարազում կրառվող հիմնական գույները** :

1. կապույտը, 2. շագանակագույնը, 3. նարնջագույնը, 4. սպիտակը,
5. մանուշակագույնը, 6. դեղինը

1. 3,5,6
2. 2,4,5,6
3. 1,4,5
4. 1, 2,3,4

24 **Ո՞րն է հայկական տարազի հորինվածքի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. կառուցվածքը (կոնստրուկցիան)
2. նյութը
3. գույնը
4. զարդանախշը

25 **Աշխարհահռչակ թանգարաններից որո՞ւմ են առավելագույնս ներկայացվել ու լուսաբանվել տարազի և նորաձևության մեծաքանակ հավաքածուները:**

1. Ֆլորենցիայի Գուչիի թանգարանում
2. Լոնդոնի նորաձևության և տեքստիլի թանգարանում
3. Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում
4. Կիոտոյի հագուստի թանգարան-ինստիտուտում

26 **Ինչպիսի՞ն է ազգային տարազում կիրառվող հիմնական ուրվագիծը:**

1. ուղիղ
2. լրիվ ընդգրկող
3. ազատ
4. սեղանաձև

27 **Ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային նախադրյալներից է՝**

1. ստեղծագործելու միջավայրը
2. հիշողությունը
3. հանրահայտ նկարչի ստեղծագործությունը
4. հուզազգայական մթնոլորտը

28 **Կերպարվեստի ո՞ր տեսակին է պատկանում լինոփորագրությունը:**

1. քանդակագործությանը
2. գրաֆիկային
3. գեղանկարին
4. դեկորատիվ արվեստին

29 **Թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կոչվում է՝**

1. էստամպ
2. կոլաժ
3. օֆորտ
4. մոնոտիպիա

30 **Ո՞րն է հայկական արևմտյան տարազաձևի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. հարուստ ասեղնագործությունը
2. գոտին
3. գլխի հարդարանքը
4. զարդանախշը

31 **Նշվածներից հայկական ավանդական տարազի հորինվածքում ինչպիսի՞ հին զարդանախշից է առավել հաճախ գործածվել:**

1. Տ-աձև
2. շրջանաձև
3. ռոմբաձև
4. քառակուսի

32 **Աշխարհում ամենահին տիկնիկներից է համարվում մամոնտի ոսկրից պատրաստված մարիոնետ տիկնիկը. որտե՞ղ է այն հայտնաբերվել:**

1. Ֆրանսիայում
2. Չեխիայում
3. Իսպանիայում
4. Գերմանիայում

33 **Ստեղծագործության վերլուծության համար առաջնահերթ ո՞ր կարողությունն է հարկավոր զարգացնել առաջին հերթին:**

1. տեսողական ընկալումը
2. վերլուծական մտածողությունը
3. հաղորդակցական կարողությունը
4. համադրական դիտարկումը

34 **Հայ մեծանուն նկարիչներից ո՞վ Է թատերական հագուստի էսքիզներ կատարել:**

1. Արշիլ Գորկին
2. Մինաս Ավետիսյանը
3. Վարդգես Սուրենյանցը
4. Մարտիրոս Սարյանը

35 **Հին հայկական ավանդական հարսանիքում, որպես ավանդույթ հարսնացուին զարդերի հետ մեկտեղ սկեսուը ուրիշ ի՞նչ էր նվիրում:**

1. ոսկեթել ասեղնագործ կարմիր գոգնոց
2. գլխի հարդարանք
3. սպասք
4. կարպետագործ անկողնապարկ

36 **Որտե՞ղ է սկզբնավորվել տարբեր իրերի պատրաստումը պապիե-մաշեի տեխնիկայով:**

1. Ֆրանսիայում
2. Չինաստանում
3. Գերմանիայում
4. Ճապոնիայում

37 **Հայաստանի ո՞ր թանգարանում են ներկայացվել և ֆոնդերում պահպանվել հայկական տարազի առավել շատ նմուշներ:**

1. Էրեբունի թանգարանում
2. Հովհաննես Շարամբերյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում
3. Երևանի պատմության թանգարանում
4. Հայաստանի պատմության թանգարանում

38 **Տրվածներից ո՞րն է թեմատիկ հորինվածքի տարր:**

1. ստեղծագործության չափը
2. ստեղծագործության նյութը
3. ստեղծագործության սկզբնաղբյուրը
4. ստեղծագործության գուներանգը

39 **Ուսուցման գործընթացում ո՞րն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը:**

1. սովորողների պատրաստվածության ստուգումը
2. նպատակաուղղվածության ձևավորումը
3. ճանաչողական մտածողության զարգացումը
4. այլընտրանքային տեղեկատվության աղբյուր ստեղծելը

40 **Հայաստանում ո՞ր դարաշրջանում է ձևավորվել որմնանկարչությունը:**

1. ուրարտական
2. միջնադարյան
3. նախնադարյան
4. հելլենիստական

41 **Ո՞ր տաճարի բաղնիքում է պատկերված հայկական խճանկարչության առաջին նմուշը:**

1. Գառնի
2. Զվարթնոց
3. Արուճ
4. Էմբատավանք

42 **Ու՞մ անվան հետ է կապված *հելլենիզմ* եզրույթը:**

1. Ալեքսանդր Մակեդոնացու
2. Բորիս Պիոտրովսկու
3. Արիստոտելի
4. Անատոլի Գեկկերի

43 **Ո՞ր թվականին և որտե՞ղ է ձևավորվել Գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերությունը՝**

1. 1868 թ. Կիևում
2. 1856 թ. Իրկուտսկում
3. 1879 թ. Մոսկվայում
4. 1870 թ. Սանկտ Պետերբուրգում

44 **Նշված հայկական եկեղեցիներից ո՞րն է համարվում բազիլիկ տիպի կառույց:**

1. Շողակաթ
2. Երերույք
3. Հռիփսիմե
4. Գայանե

45 **Ո՞վ է հայ դասական բնանկարի հիմնադիրը:**

1. Գևորգ Բաշինջաղյանը
2. Փանոս Թերլեմեզյանը
3. Եղիշե Թադևոսյանը
4. Մարտիրոս Սարյանը

46 **Ո՞վ է ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամը:**

1. Արշակ Ֆեթվաճյանը
2. Ստեփան Աղաջանյանը
3. Հակոբ Հակոբյանը
4. Եղիշե Թադևոսյանը

47 **Ապարանի Վերածնունդ հուշահամալիրը քանի՞ հուշակոթողներից է բաղկացած:**

1. մեկ
2. երեք
3. չորս
4. երեկու

48 **Տրվածներից ո՞րը գեղանկարչության արտահայտչամիջոց *չէ:***

1. լուսաստվերը
2. հեռանկարը
3. գիծը
4. գույնը

49 **Գրիչ, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը ո՞ր մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ է:**

1. Վասպուրականի
2. Տաթևի
3. Կիլիկյան
4. Գլաձորի

50 **Հովնաթանյան նկարչների տոհմի ներկայացուցիչներից ո՞վ է Շուշանիկ Նաղիրյանի դիմանկարի հեղինակը:**

1. Հովնաթան Հովնաթանյանը
2. Աղաթոն Հովնաթանյանը
3. Նաղաշ Հովնաթանը
4. Հակոբ Հովնաթանյանը

51 **Աբովյանի ծննդավայր Քանաքեռ գյուղի վերաբերյալ առաջին հիշատակությունը ո՞ր եկեղեցու գավթի արձանագրության մեջ է հիշատակվում:**

1. Հաղարծին
2. Գոշավանք
3. Սանահին
4. Տաթև

52 **Ո՞վ է Խաչտուր Աբովյանի տուն-թանգարանի բակում տեղադրված հուշարձանի հեղինակը:**

1. Անդրեաս Տեր-Մարուքյանը
2. Արա Հարությունյանը
3. Արա Սարգսյանը
4. Ղուկաս Չուբարյանը

53 **Ո՞վ է Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը:**

1. Արա Հարությունյանը
2. Լևոն Թոքմաջյանը
3. Արա Սարգսյանը
4. Ղուկաս Չուբարյանը

54 **Ու՞մ վրձնին է պատկանում «Նաիրայի դստեր հարությունը» կտավը:**

1. Վալենտին Սերովի
2. Իլյա Ռեպինի
3. Վասիլի Պոլենովի
4. Իսահակ Լեվիտանի

55 **Ո՞վ է «Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի» հուշարձանի հեղինակը**

1. Ղուկաս Չուբարյանը
2. Հակով Գյուրջյանը
3. Սարգիս Բաղդասարյանը
4. Արտաշես Հովսեփյանը

56 **Ո՞րտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» կտավը:**

1. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում
2. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահում
3. Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում
4. Հայաստանի ազգային պակերասրահում

57 **Ո՞վ է «Մենք ենք մեր սարերը»(Պապիկ -տատիկ) հուշարձանի հեղինակը՝**

1. Երվանդ Ոսկանը
2. Այծեմնիկ Ուրարտուն
3. Սարգիս Բաղդասարյանը
4. Դավիթ Երևանցին

58 **Ո՞վ է «Խնջույք Քուռ գետի ափին» աշխատանքի հեղինակը:**

1. Հակոբ Հակոբյան
2. Հովհաննես Այվազովսկի
3. Ստեփան Աղաջանյան
4. Ստեփանոս Ներսիսյան

59 **Ո՞վ է հին հունական դիցաբանության պանթեոնի «Արևի Աստվածը»:**

1. Հելիոսը
2. Աթենաս-Պալլասը
3. Զևսը
4. Աֆրոդիտեն

60 **Ո՞վ է «Հանճարն ու ամբոխը» կտավի հեղինակը:**

1. Մարտիրոս Սարյանը
2. Եղիշե Թադևոսյանը
3. Փանոս Թերլեմեզյանը
4. Գևորգ Բաշինջաղյանը

61 **Ո՞ր Աստվածներն են կազմում ուրարատական դիցարանի գերագույն եռյակը:**

1. Արամազդ,Անահիտ, Վանատուր
2. Միհր,Նանե,Աստղիկ
3. Խալդի, Թեյշեբա, Շիվինի
4. Վահագն, Անահիտ, Տիր

62 **Ո՞ր կինոռեժիսորն է նկարահանել «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը:**

1. Երվանդ Ծատուրյանը
2. Վահան Գալստյանը
3. Լևոն Աբրահամյանը
4. Սերգեյ Փարաջանովը

63 **Ո՞վ է հայկական դիցարանի «Ստորերկրյա աշխարհի Աստվածը»:**

1. Տիրը
2. Միհրը
3. Արամազդը
4. Սպանդարամետը

64 **Համապատասխանեցնել նշված հեղինակներին՝ ըստ մանրանկարչական դպրոցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Սարգիս Պիծակ, բ.Թորոս Տարոնացի, գ. Մարգարե, դ.Գրիգոր Տաթևացի

ա	բ	գ	դ

1. Կիլիկյան մանրանկարչության դպրոց
2. Տաթևի մանրանկարչության դպրոց
3. Անիի մանրանկարչության դպրոց
4. Գլաձորի մանրանկարչության դպրոց

65 **Համապատախանեցնել հետևյալ մայրաքաղաքը ըստ դարաշրջանների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Դվինը , բ. Տուշպան, գ. Երվանդաշատը, դ.Անին:

ա	բ	գ	դ

1. Վաղ միջնադարյան
2. Հելլենիստական
3. Զարգացած միջնադարյան
4. Ուրարատական

66 **Համատասխանեցնել քանդակագործների աշխատանքները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

Ա. Կոմիտասի հուշարձան, 2003, Դավիթ Երևանցի

Բ. Բուլատ Ակուջավա, 2002 թ. Գեորգի Ֆրանգուլյան



Գ. Սասունցի Դավիթ, 1971 թ. Վարազ Սամուելյան

Դ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 2005 թ. Խաչիկ Ղազանչյան

1. Վատիկան
2. Ֆրեզնո
3. Մոսկվա
4. Փարիզ

ա	բ	գ	դ

67 **Համապատասխանեցնել նշված վարպետներին ըստ ճարտարապետական կառույցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա. Անիի Մայր տաճար, բ. Նորավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի,
գ. Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցի, դ.Արատեսի վանքի գավիթը:

1. Տրդատ
2. Մանուել
3. Մոմիկ
4. Սիրանես

ա	բ	գ	դ

68

Համապատասխանեցնել նշված արվեստագետներին իրենց աշխատանքներին: Համապատասխան վանդակներում նշել համարները:



ա.Խորհրդավոր ընթրիք, (1495-1498)

բ. Վեներայի ծնունդը, (1486)

գ.Սիքստինյան Տիրամայրը(1512-1513)

դ. Աղոթող ձեռքեր (մոտ. 1508)

.

1. Լեոնարդո դա Վինչի
2. Սանդրո Բոտիչելլի
3. Ռաֆայել Սանտի
4. Ալբրեխտ Դյուրեր

ա	բ	գ	դ

69 **Համապատասխանեցնել հետևյալ պաշտամունքային կառույցները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա. Զվարթնոց

բ. Կարմրավոր



Գ. Հռիփսիմե

դ. Օձուն

1. Վաղարշապատից 3 կմ հարավ-արևելք
2. Աշտարակ
3. Լոռի
4. Վաղարշապատ

ա	բ	գ	դ

70

Համապատասխանեցնել դեկորատիվ ստեղծագործությունների անունները իրենց բնութագրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. ասեղով և թելով գործված ստեղծագործություն

բ. գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն

գ. գործվածքի վրա կաղապարի միջոցով և հատուկ նյութերով պատկերված նկարազարդ ստեղծագործություն

դ. գնդասեղներով և թելերի հանգույցներով նախշազարդ ձեռագործ ստեղծագործություն

1. դաջազարդում
2. բատիկ
3. ժանյակ
4. մաքրամե

ա	բ	գ	դ